ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2025 թվականի N 2709-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ (Հ.ՇԻՐԱԶԻ) ՓՈՂՈՑ N 17 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԻՍԱՆԿՈՒՂԸ) ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՐԱՀ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Խաչատուր Հարությունի Քալաշյանը մասնակցել է Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցութային հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 25-ին կայացած անշարժ գույքի (կիսանկուղ) վարձակալության տրամադրման մրցույթին և առաջարկելով լավագույն պայմաններ՝ հաղթող է ճանաչվել Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի N 78-Ա որոշմամբ առանձնացված, Գյումրի քաղաքի Գորկու (Հ.Շիրազի) փողոց N 17 հասցեի անշարժ գույքը (կիսանկուղը) վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթում (արձանագրություն թիվ 25-01):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 1997215) Գորկու (Հ.Շիրազի) փողոց N 17 հասցեի 37,62 (երեսունյոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը (կիսանկուղը) 10 (տասը) տարի ժամկետով, տարեկան 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափ վարձավճարով վարձակալության իրավունքով տրամադրել քաղաքացի Խաչատուր Հարությունի Քալաշյանին սպասարկման սրահ կազմակերպելու համար:
2. Սահմանված կարգով քաղաքացի Խաչատուր Հարությունի Քալաշյանի հետ կնքել անշարժ գույքի (կիսանկուղ) վարձակալության իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
3. Պարտավորեցնել քաղաքացի Խաչատուր Հարությունի Քալաշյանին.
   1) համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ու մյուս նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջներին համաձայն, սեփական միջոցներով պատվիրել սպասարկման սրահ կազմակերպելու նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման,
   2) օրենքով սահմանված կարգով ստանալ շինարարության թույլտվություն և նրա ավարտը ներկայացնել փաստագրման:
4. Անշարժ գույքի (կիսանկուղի) վարձակալության իրավունքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Խաչատուր Հարությունի Քալաշյանի միջոցների հաշվին:

5. Վարձակալության իրավունքով տրամադրված անշարժ գույքը (կիսանկուղը) ըստ գործառական նշանակության չօգտագործելու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ, ընդհուպ մինչև սույն որոշման անվավեր ճանաչելը և անշարժ գույքը (կիսանկուղը) հետ վերցնելը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025-11-10 11:39:05 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2025 **թվականի** N 2708-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 06-Ի N 166 ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 472 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի 2025 թվականի հունիսի 14-ի թիվ Զ/623-2025 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ տաղավարը տեղահանվել է Գյումրու համայնքապետարանի կողմից Հաղթանակի պողոտայի վերակառուցման նպատակով ՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2002 թվականի մարտի 06-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Գագիկ Արծրունյանին կենցաղ- սպասարկման ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով Հաղթանակի պողոտայի և Մայակովսկու փողոցի հատման խաչմերուկի հարևանությամբ՝ Հաղթանակի պուրակի հյուսային հատվածի մայթին հարող տարածքից վարձակալությամբ հողամաս տրամադրելու մասին» N 166 և 2007 թվականի մարտի 27-ի « Քաղ. Գագիկ Արծրունյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով տրամադրված 15.0 քառ.մ հողամասի վարձակալության ժամկետը երկարաձգելու մասին» N 472 որոշումները:
2. Լուծել հողամասի վարձակալության 2007 թվականի հունիսի 01-ի (գրանցված սեղանամատյանում N 3809) թիվ 30 պայմանագրերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** 2025-11-10 11:23:50 GMT+4 Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» նոյեմբերի 2025 **թվականի** N 2707 -Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԹԻՎ 1833 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիինք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 02/10/2025 N Կ-02102025-08-0260 որոշումը՝ **որոշում եմ.**

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 17-ի N 1833-Ա որոշման հիման վրա կազմված անշարժ գույքի առուվաճառքի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի (գրանցված սեղանամատյանում N 8720) թիվ 1833 պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ագնեսյա Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«10» Նոյեմբերի 2025 թվականի №2706-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ 5Ա ՇԵՆՔ, 54 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №30092025-08-0035) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Համբարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16718-2025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Խրիմյան Հայրիկի 1-ին թաղամաս 5ա շենք, 54 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №30092025-08-0035) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղու 1-ին թաղամաս, 5ա շենք, 54 բնակարան**

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«10» նոյեմբերի 2025 թվականի № 2705Ն

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ 8 ԴՈՍ 1 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №19112019-08-0023) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Գևորգյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16620-2025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Կազաչի պոստ 8 դոս 1 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №19112019-08-0023) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կազաչի պոստ թաղամաս, 8 շենք, 2 բնակարան**

ՅԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» Հոկտեմբերի 2025 թվականի №2704-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԻՆԵ ՄԿՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 77Ա ՇԵՆՔ 34 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարինե Մկոյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16705-2025 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ՍԻՆՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Կարինե Մկոյանին պատկանող Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց 77ա շենք 34 բնակարանը երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **80.2** քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 77ա շենք, 34 բնակարան**

2) **15.7** քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 77ա շենք, 34/1 բնակարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ — Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» Հոկտեմբերի 2025 թվականի №2703-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Պ.ՍԵՎԱԿ 3 ՇԵՆՔ N20Ա ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 78.81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Գյումրի քաղաք, Պ.Սևակ 3 շենք N20ա բնակարան հասցեագրությամբ 78.81 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Պ. Սևակի փողոց, 3 շենք, 20/1 բնակարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» նոյեմբերի 2025 թվականի №2702-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 110Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Հարությունյանի լիազորված անձ Զոյա Հարությունյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16953-2025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սեփականության իրավունքով քաղաքացի Հովհաննես Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց 110ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., 26 Կոմիսարների փողոց, 110/1 բնակելի տուն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» Սեպտեմբերի 2025 թվականի №2702Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 110Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Հարությունյանի լիազորված անձ Ջոյա Հարությունյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16953-2025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սեփականության իրավունքով քաղաքացի Հովհաննես Հարությունյանին պատկանող Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց 110ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., 26 Կոմիսարների փողոց, 110/1 բնակելի տուն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» Նոյեմբերի 2025 թվականի №2701-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼՄԱ ԵԴԻԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 08-001-0511-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺՆԵՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալմա Եդիգարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №16540-2025 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում գտնվող ժառանգության իրավունքով քաղաքացի Ալմա Եդիգարյանին պատկանող 08-001-0511-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի բաժնեմասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Արևելյան շրջանցող ճանապարհ, 15 հողամաս**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» Նոյեմբերի 2025 թվականի №2700Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՎԱՐԴ-ԲԱՂ 1 ԹԱՂԱՄԱՍ 1 ՇԵՆՔ N33 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 64.33 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Վարդ-բաղ 1 թաղամաս 1 շենք N33 բնակարան հասցեագրությամբ 64.33 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վարդ-Բաղի 1-ին մ/շ 1-ին թաղամաս, 1 շենք, 33/1 բնակարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ — Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» Նոյեմբերի 2025 թվականի N 2699 Ա

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-ԻՆ ՏՐՎԱԾ N02/17 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստյոպա Հովհաննիսյանին Գյումրի քաղաքի Լ. Մադոյան փող. N162 հասցեում անհատական բնակելի տան , ավտոտնակի և խոհանոցի նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2017 թվականի փետրվարի 13-ին տրվել է N02/17 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի փետրվարի 17-ին տրված N02/17 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի